ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք.
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս`098777709,
էլ. փոստ`khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

« 11 » հունիսի 2018 թվականի № 15

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 11 -Ի № 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ ավագանին որոշում է.

Հաստատել համայնքի 2018 թվականի հունիսի 11-ի № 5 հերթական նիստի օրակարգը.

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի № 36-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին
2. Համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի № 39-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին
3. Համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 7-ի № 7-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին
4.Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի մշակման նախագիծը հաստատելու մասին

Կողմ(7) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԷԴԻԿ ՆԱԳԴԱԼՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ղ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփառ համայնք,
գ.Խաչփառ 7-րդ փողոց փկ 6,հեռախոս 098777709,
էլ. փոստ khachpar.aramt@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հունիսի 2018 թվականի №16 -Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի № 36-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ավագանին որոշում է.

Համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի « Համայնքի տարածքում 2018 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» № 36-Ն որոշումը լրացնել 31-րդ ենթակետով.

«31) սահմանել համայնքային անասնաբույժի կողմից մատուցվող վճարովի անասնաբուժական ծառայությունների առաջարկվող ցանկը և գնացուցակը՝
ա. կենդանիների հիվանդությունների բուժման, կանխարգելման հարցերով խորհրդատվություն՝ 500 դրամ,
բ. ծննդօգնություն՝ թեթև միջամտության դեպքում 1000 դրամ, ծանր միջամտության դեպքում 5000 դրամ,
գ. վարակիչ հիվանդությունների նկատմամբ կենդանիների իմունականխարգելիչ պատվաստումներ և արյունառում կամ այլ նմուշառում (բացառությամբ՝ «Գյուղատնտեսական կենդանիների պատվաստում» պետական ծրագրում ընդգրկված հակահամաճարակային միջոցառումների)՝ մանր եղջերավոր անասունների համար 100 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 200 դրամ,
դ. կենդանիների արտաքին և ներքին մակաբույծների դեմ պայքարի համար 200 դրամ,
ե. ախտահանություն 1 քառակուսի մետրի համար՝ 200 դրամ,
զ. միջատազերծում (դեզինսեկցիա)՝ 1 քառակուսի մետրի համար՝ 100 դրամ,
է. կրծողների ոչնչացում (դեռատիզացիա)՝ 1 քառակուսի մետրի համար՝ 200 դրամ,
ը. արհեստական սերմնավորման համար՝ 5000 դրամ,
թ. կենդանու հերձում՝ մանր եղջերավոր անասունների համար՝ 1000 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար՝ 3000 դրամ,
ժ. կենդանու բուժում յուրաքանչյուր այցելությունը մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 2000 դրամ,
ի. կենդանիների նախասպանդային զննում՝ մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 2000 դրամ,
լ. կենդանիների հետսպանդային զննում (մինչև 2018թ. հուլիս ամիսը)՝ մանր եղջերավոր անասունների համար 1000 դրամ, խոշոր եղջերավոր անասունների համար 2000 դրամ:»:

Կողմ(7) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ
ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ԷԴԻԿ ՆԱԴԴԱԼՅԱՆ
ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հունիսի 2018 թվականի №17 -Ն

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 11-Ի № 39-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով՝ ավագանին որոշում է.

1.Համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 11-ի «2018 թվականի համար համայնքապետարանի աշխատակազմի, «Ծիծեռնակ» մսուր-մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» № 39-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 1-ի աղյուսակի՝

1) «Քաղաքացիական աշխատանք» բաժինը լրացնել հետևյալ պարբերությամբ՝

| | | |
|---|---|---|
| Անասնաբույժ | 0.5 | 55.0 |

Կողմ(7) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱԳԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց թիվ 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«11» հունիսի 2018 թվականի №18

## ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի № 7-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության իրավական ակտերի փորձաքննության գործակալության պետ Կ. Խտրյանի 10.04.2018թ. № Ե 60 գրությունը՝ ավագանին որոշում է.

Համայնքի ավագանու 2018 թվականի մարտի 7-ի «Խաչփար համայնքի 2018 թվականի տարեկան աշխատանքային պլանը հաստատելու մասին» № 37-Ն որոշման համարից հանել «Ն» տառը:

Կողմ(7) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱՂԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Դ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնք,
գ.Խաչփար 7-րդ փողոց շենք 6,հեռախոս՝098777709,
էլ. փոստ՝ khachpar.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**«11» հունիսի 2018 թվականի №19-Ն**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԽԱՉՓԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՊԱՐԶԵՑՎԱԾ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԾԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 29-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված միջգերատեսչական հանձնաժողովի դրական եզրակացությունն ու համայնքի ղեկավարի առաջարկությունը, համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Խաչփար համայնքի (բնակավայրի) պարզեցված գլխավոր հատակագծի մշակման նախագիծը՝ (այսուհետ՝ Պարզեցված գլխավոր հատակագիծ) համաձայն հավելվածի:
2. Գլխավոր հատակագծով սահմանված՝ հողամասերի նպատակային կամ գործառնական նշանակությունները համարել փոփոխված «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^3$ հոդվածի 5-րդ մասի դրույթի պահանջի ապահովման պայմանով և հավելվածի «Հողերի օգտագործման սխեման (հողամասերի կատեգորիայի տրանսֆորմացիան)» գծագրին (Այսուհետ՝ Գծագիր) և նրանում սահմանված կառուցապատման փուլերին համապատասխան, ընդ որում.

| Հողամասերի նպատակային նշանակությունների փոփոխությունները | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| № | Ինդեքսը գծագրի վրա | | Առկա նպատակային նշանակությունը | Տարածքի մակերեսը | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային նշանակությունը | Տարածքի Մակերեսը (հա) |
| 1 | 2 | | 3 | 4 | 5 | 6 |
| Առաջնահերթ (մինչև 5 տարի) | | | | | | |
| 1 | 1.015 հա արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ որից | | | | բնակավայրի հողեր | |
| | Ա-3 | արդյունաբերական | | 0.069 հա | հասարակական կառուցապատման | 0.069 հա |
| | Ա-4 | գյուղ. արտադրության | | 0.434 հա | բնակելի կառուցապատման | 0.434 հա |
| | Ա-5 | գյուղ. արտադրության | | 0.47 հա | բնակելի կառուցապատման | 0.47 հա |
| | Ա-6 | գյուղ. արտադրության | | 0.042 հա | հասարակական կառուցապատման | 0.042 հա |
| *ընդհանուր* | | | | | | 1.015 հա |
| 2 | 0.02 հա բնակավայրի հողեր ՝ որից | | | | էներգետիկայի, կապի, | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր | |
| | Բ-2 | հասարակական կառուցապատման | 0,02 հա | կապի | 0,02 հա |
| *ընդհանուր* | | | | | 0,02 հա |
| 3 | 0.02 հա գյուղատնտեսական նշանակության հողեր՝ որից | | | էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր | |
| | Գ-2 | վարելահող | 0.02 հա | կապի | 0.02 հա |
| *ընդհանուր* | | | | | 0,02 հա |
| 4 | 0.01 հա բնակավայրերի հողեր՝ որից | | | հատուկ պահպանվող տարածքների հողեր | |
| | Բ-1 | հասարակական կառուցապատման | 0.01 հա | պատմության և մշակույթի | 0.01 հա |
| *ընդհանուր* | | | | | 0,01 հա |
| 5 | 0.6 հա գյուղատնտեսական նշանակության հողեր՝ որից | | | բնակավայրի հողեր | |
| | Գ-4 | Այլ հողեր | 0.27 հա | հասարակական կառուցապատման | 0.27 հա |
| | Գ-5 | Վարելահող | 0.33 հա | հասարակական կառուցապատման | 0.33 հա |
| *ընդհանուր* | | | | | 0.6 հա |
| 6 | 0.2412 հա արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլարտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ որից | | | բնակավայրի հողեր | |
| | Ա-9 | գյուղ. արտադրության | 0.2412 հա | բնակելի կառուցապատման | 0.2412 հա |
| *ընդհանուր* | | | | | 0.2412 հա |
| 7 | 1.1293 հա արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլարտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ որից | | | գյուղատնտեսական նշանակության հողեր | |
| | Ա-11 | գյուղ. արտադրության | 0.5593 հա | Այլ հողեր | 0.5593 հա |
| | Ա-12 | գյուղ. արտադրության | 0.57 հա | Այլ հողեր | 0.57 հա |
| *ընդհանուր* | | | | | 1.1293 հա |
| | | Միջնաժամկետ (5-10 տարի) | | | |
| 8 | 0.525 հա արդյունաբերական, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության օբյեկտների հողեր՝ որից | | | բնակավայրի հողեր | |
| | Ա-7 | գյուղ. արտադրության | 0.2 հա | բնակելի կառուցապատման | 0.2 հա |
| | Ա-8 | գյուղ. արտադրության | 0.085 հա | ընդհանուր օգտագործման (փողոցներ) | 0.085 հա |
| | Ա-10 | գյուղ. արտադրության | 0.24 հա | ընդհանուր օգտագործման (փողոցներ) | 0.24 հա |
| *ընդհանուր* | | | | | 0.765 հա |
| | | Հեռանկարային (10-15 տարի) | | | |
| 9 | 0.5 հա գյուղատնտեսական նշանակության հողեր՝ որից | | | էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների հողեր | |
| | Գ-1 | վարելահող | 0.5 հա | կոմունալ (մաքրման կայան) | 0.5 հա |
| *ընդհանուր* | | | | | 0.5 հա |
| 10 | 2.1845 հա գյուղատնտեսական նշանակության հողեր՝ որից | | | բնակավայրի հողեր | |
| | Գ-3 | Այլ հողեր | 1.3 հա | ընդհանուր օգտագործման | 1.3 հա |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | (կանաչ) | |
| | Գ-6 | Այլ հողեր | 0.8845 հա | բնակելի կառուցապատման | 0.8845 հա |
| *ընդհանուր* | | | | | 2.1845 հա |

| Հողամասերի գործառնական նշանակությունների փոփոխությունները | | | | | |
|---|---|---|---|---|---|
| N | Ինդեքսը գծագրի վրա | Առկա նպատակային նշանակությունը | Տարածքի մակերեսը | Գլխավոր հատակագծում փոփոխված նպատակային նշանակությունը | Տարածքի մակերեսը(հա) |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| Առաջնահերթ (մինչև 5 տարի) | | | | | |
| 1 | 0.9347 բնակավայրի հողեր՝ որից | | | բնակավայրի հողեր | |
| | Ֆ-1 | այլ հողեր | 0,63 հա | հասարակական կառուցապատման (մարզադաշտ) | 0,63 հա |
| | Ֆ-2 | հասարակական կառուցապատման | 0.1690 հա | բնակելի կառուցապատման (տնամերձ) | 0.1690 հա |
| | Ֆ-3 | հասարակական կառուցապատման | 0.056 հա | բնակելի կառուցապատման (տնամերձ) | 0.056 հա |
| | Ֆ-4 | բնակելի կառուցապատման (տնամերձ) | 0.08 հա | հասարակական կառուցապատման | 0.08 հա |
| *ընդհանուր* | | | | | 0.9347 հա |
| 1 | 1.26337 գյուղատնտեսական նշանակության հողեր՝ որից | | | գյուղատնտեսական նշանակության հողեր | |
| | Ֆ-5 | վարելահող | 1.26337 հա | Այլ հողատեսքեր | 1.26337 հա |
| *ընդհանուր* | | | | | 1.26337 հա |

3. Գյուղային և համայնքային զարգացման ծրագրերում սահմանված կարգով ներառել գլխավոր հատակագծի իրականացման համապատասխան միջոցառումները՝ ըստ սահմանված հերթականության և «Քաղաքաշինության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի $14^{3}$ հոդվածի 14-րդ և 30-րդ մասերին համապատասխան՝ հողամասերի նպատակային նշանակության փոփոխությունները պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի հողային ֆոնդի տարեկան ընթացիկ հաշվառման տվյալներում, համայնքի հողային հաշվեկշռում և արտացոլել համայնքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:

Կողմ(7) դեմ(0) ձեռնպահ(0)

ԱՐԱՐԱՏ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ

ՍԵՐԳԵՅ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ԵՍԱՅԱՆ

ՌԱՆՏԻԿ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԷԴԻԿ ՆԱԳԴԱԼՅԱՆ

ԳԱՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Գ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ